ՀՈՒՄԱՆԻԶՄԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՇՐՋՈՒՄԸ ՄԱՏԹԵՈՍ ՄԱՄՈՒՐՅԱՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐՈՒՄ

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

XIX դ. 2-րդ կեսի հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ Մ. Մամուրյանին (1830–1901) ուրույն և առաջատար տեղ է վերապահվում հատկապես հումանիստական սկզբունքների ու դրանից բխող՝ հասարակության բարեշրջման վերաբերյալ նրա հայեցակարգերում: Իր հումանիստական հայացքների հիմքում դնելով անհատի ազատության մտավոր ու հոգևոր տեսանկյունները՝ Մամուրյանը հանդես էր գալիս հասարակական ամեն մի բռնության դեմ՝ իր դատողությունների մեջ շրջանառելով Օսմանյան Թուրքիայի և առհասարակ ժամանակի դրամատիրական հասարակության իրողությունները: Մ. Մամուրյանի հումանիզմն ունի առարկայական հենակետեր՝ անհատի կամքն ու բանականությունը, որ նա համարում է ամեն մի ազատության աղբյուր: Հարկ է նկատել նաև, որ ազատություն հասկացության ըմբռնման հարցում Մամուրյանը հանդես է բերել երկակի մոտեցում: Եթե 1860-ական թվականներին անհատի ազատությունը, ինչպես և բարոյականությունը նա բխեցնում էր միջավայրի ազատության չափից՝ առավել հակվելով դեպի մատերիալիստական սկիզբը, ապա հետագայում մեկնում էր հակառակ ծայրակետից՝ անհատի ազատության աղբյուրը տեսնելով կամքի ու բանականության մեջ՝ այս վերջինները պայմանավորելով մարդուն ներքնապես տրված ազատության գիտակցությամբ: Իր հերթին, «լույս և գորություն» դառնալու համար այն պետք է ապահովվի լուսավորությամբ և կրթությամբ, եզրակացնում էր նա՝ հասարակական միջավայրին վերապահելով կարևոր, բայց և ոչ ելակետային նշանակություն[1]:

Անհատի ազատության հիմնահարցը Մամուրյանն առնչում է կրոնին, ասել կուզի՝ հասարակական գիտակցությանը, որով բանավիճում է ագնոստիցիզմի և մատերիալիզմի դեմ. կրոնը, գրում է նա, «հիմ և լծակ է ընկերության (իմա՝ հասարակության), որով կկազմվի, կշարժի ի բարին կամ ի վատ՝ սկեպտիկյան կամ նյութական վարդապետության բոլոր ճգանց հակառակ… Ինչ որ ընեն մարդկանց երևակայությունն ու գիտությունը, դարձյալ կրոնական զգացումը նույն կա ու կմնա՝ այս է հավիտենականին ճանաչումն ու պաշտոնը»[2]: Ավելին, 1870-ական թվականներին Մամուրյանը քաղաքակրթությունների պատմությունը հանգեցնում էր կրոնների պատմության՝ դարձյալ ակնհայտորեն շեղվելով նախորդ տասնամյակների իր ըմբռնումներից: Արժեքավոր է, սակայն, այն,

---

[1] *«Արևելյան մամուլ» (Զմյուռնիա), 1871, սեպտեմբեր, էջ 481:*

[2] *«Արևելյան մամուլ», 1872, նոյեմբեր, էջ 505:*

որ նա կրոնական գործոնի բացարձակացումը եզրավորում է անհատի կրոնական զգացման շրջանակներով. կրոնական զգացման աղբյուրը սիրտն է, որպես բնական զգացում, ուստի և կրոնական դաստիարակությունը պետք է փոխարինել ընդհանրապես մարդասիրական, բարոյական դաստիարակությամբ: Ուշագրավ է, այս առթիվ, Մամուրյանի քննադատական վերաբերմունքը Գալուստ Կոստանդյանի «Մեթոտին վրա» աշխատության հանդեպ: Մի կողմ թողնելով Գ. Կոստանդյանի գրքի[3] և նրա ընդդիմախոսների տեսական ըմբռնումները՝ նկատենք, որ Մամուրյանը հատկապես քննադատության թիրախ էր դարձնում այդ հեղինակի աթեիզմը: Այստեղ ևս նա կրոնը դիտում է որպես մարդկային ոգու, այլասիրության և հումանիզմի բնածին զգացում: Հնարավոր չէ, կարծում է Մամուրյանը, կրոնը վերացնել մարդու սրտից, և ուրեմն, հիմնարկություններից, որովհետև հնարավոր չէ ջնջել «մարդկային սիրտը»[4]: Հայ իրականության մեջ նա մասնավորապես կարևորում էր կրոնի ազգապահպան գործառույթը:

Դժվար չէ նկատել, որ Մամուրյանը ելնում է անհատի ազատության, նրա կրոնական ազատության սկզբունքից, որ հետամտում էր ազգային եկեղեցու ազատությունը, ինչպես և ցանկացած ազգային եկեղեցու ազատությունը, որը հիմք էր դնելու իր ակնկալած հումանիստական միությանը՝ համընդհանուր բարոյական միությանը: Նա աթեիզմին առարկում էր նաև այն հիմնավորումով, որ ազգապահպանության գլխավոր գործոններն են կրոնը, պատմությունը և գրականությունը, որով և ազգը պայքարում է «ավելի հզոր և ազդու տարրների» դեմ[5]:

Մամուրյանի հումանիստական հայացքները խարսխվում են անհատի փիլիսոփայական ըմբռնման վրա: Այս իմաստով հետաքրքիր են նրա եզրահանգումները հասարակության մեջ անհատի գրաված տեղի և պետության՝ որպես հասարակական հիմնարկության հետ նրա ունեցած փոխհարաբերությունների վերաբերյալ: Ինչպես ի բնե անբռնաբարելի և ազատ է մարդու անձը, նույնպես անձեռնմխելի պետք է լինեն նրա աշխատանքի և գործունեության արդյունքները, որ, ի վերջո, նշանակում է անհատի աշխատանքի ազատություն: Սրանից Մամուրյանը մակաբերում էր, որ պետությունը կոչված է պահպանելու և ապահովելու անհատի իրավունքներն ու նրա տիրապետությունը բնության վրա: Այստեղ տնտեսական բոլոր ազատությունների մեջ նա բացառիկ տեղ է հատկացնում աշխատանքի ազատությանը. ավելին, դրանից էր ածանցում անհատի մյուս բոլոր ազատությունները,«վասնզի չկա արտադրություն մ'որ նյութական,մտային և բարոյական աշխատության մը հետևությունը չլինի»[6]:Նշված ուղղություններովանհատի և հասարակությանգործունեությունը կարգավորող կարևոր կազմակերպությունը, Մամուրյանի կարծիքով, պետությունն է,

---

[3] *1870-ականի վերջերին Գ. Կոստանդյանի աշխատությունն իր ազդեցությունն է թողել նաև Ե. Տեմիրճիպաշյանի փիլիսոփայական ըմբռնումների վրա (տե՛ս* Я. Хачатрян. Егия Темирчипашян как видный профессиональный популяризатор философии и эстетики.– *Հայ էսթետիկական մտքի պատմությունից, գիրք 6, Երևան, 2006, էջ 97):*

[4] *«Արևելյան մամուլ», 1879, հունվար, էջ 343:*

[5] *Նույն տեղում, էջ 346:*

[6] *«Արևելյան մամուլ», 1871, սեպտեմբեր, էջ 481:*

որ կոչված է ապահովելու անհատի կենսագործունեությունը՝ արտադրությունը, հասարակական հարստությունը, դրա արդյունքների բաշխումն ու սպառումը արդարացի վերահսկելու ձևով:

Իր տեսական դատողություններում՝ նվիրված անհատին, որպես փիլիսոփայության ուսումնասիրության առարկայի, Մամուրյանն ուշադրություն է դարձնում մյուս անհատների և, ի վերջո, հասարակության հետ նրա փոխհարաբերակցության խնդրին: 1890-ական թվականներին մասնավորապես, նա հասարակության զարգացման ընթացքը պատկերացնում է անհատի ելակետային նշանակությամբ, այն սկսում է անհատից, բայց հիշյալ առնչությունների մեջ կարևորում է համընդհանուր սիրո և եղբայրության գործոնը: Մարդու էության «մասնական շրջանները,– գրում է նա,– հետզհետ իրար կցվելով կրնան կազմել հանրային շրջագիծ մը՝ կեդրոն ունենալով սերն»[7]: Մամուրյանն այստեղ և նույն ժամանակաշրջանում գրած իր հոդվածներում հատուկ նշանակություն է տալիս ալտրուիզմին՝ այլասիրությանը, ընդսմին ոչ թե որպես ինքնակա զգացման, այլ հումանիստական գաղափարների գործնական դրսևորման: Այլասիրությունը, ինչպես կարծում էր Մամուրյանը, սեփական ես-ի հաղթահարման ուղին է, որ տանում է դեպի հասարակական հակասությունների հաղթահարման նպատակը: Հասարակական հակասությունների վերացումը կամ մեղմումը Մամուրյանն առնչում է անհատի իռացիոնալ հակումները (անբանություն, խռովություն, հափշտակելու կիրք և այլն) զսպող՝ այլասիրության վերընթաց զարգացման հետ, որ պետք է ամրագրվի իրավունքի, պետական կամ օրենսդրական տնօրինությունների մեջ: Հակառակ դեպքում, նկատում է նա, մարդկանց «վայրագ իդեաները» կարող են իրենց համար ճարակ փնտրել՝ վրդովելով հանրային բարեկարգությունը և վիթխարի վնասներ առաջ բերելով, ինչը հաճախ է նկատվում եվրոպական երկրներում:

Համընդհանուր սիրո գաղափարը Մամուրյանը, ինչպես ասվեց, գնահատում է իր գործնական դրսևորումներում, հակառակ դեպքում բացառելով դրա ամբողջականությունը: Իր խմբագրած «Արևելյան մամուլ» հանդեսում նա համամտությունն էր հայտնում ֆրանսիացի փիլիսոփա Քլավելին, որը նշված գաղափարի կենսունակությունը տեսնում էր այնպիսի շարժման մեջ, որը նվաճում է մարդկանց սրտերն ու զգացումները և այս կերպ «զուտ տեսական սահմանեն ելնելով՝ գործնական ներգործություն մը կը ստանա՝ մարդկության ուղիղ ճամբու մեջ դնելու համար»[8]:

Հետաքրքիր է Մամուրյանի ըմբռնումներում մարդու իմացական և սուբյեկտիվ զարգացման համապատասխանության կամ ներդաշնակության խնդիրը: Նա այս սկիզբների հակադրությամբ էր բացատրում «արդի ընկերային ջլախտական վիճակն ու մոլությունները»: Թարգմանական մի հոդվածում, որ Մամուրյանը տպագրեց «Արևելյան մամուլում» և որը համերաշխում է նրա մտքերին, ն շվում է, որ բարոյականության չափանիշը պետք է փնտրել ֆիզիկական ու իմացական կարողությունների հավասարակշռության մեջ, և որ մեկի խանգարման դեպքում խանգարվում է և մյուսը[9]:

---

[7] *«Արևելյան մամուլ», 1894, 15 ապրիլի, էջ 229:*

[8] *«Արևելյան մամուլ», 1895, 1 հունվարի, էջ 321–322:*

Պատահական չէ, որ իր գործունեության ուշ շրջանում Մամուրյանն առավել հակվում է դեպի պոզիտիվիզմը՝ շրջանառության մեջ դնելով նաև Կոնտի՝ մարդկության ընդհանրական կրոնի գաղափարը, որը, նրա կարծիքով, պետք է նպաստեր հաջողությամբ հաղթահարելու եսականության ու այլասիրության երկվությունը մարդու մեջ և կառուցելու ապագա հասարակության իմացական, բարոյական ու գիտական ճշմարտությունների շենքը[10]: Այստեղ ևս Մամուրյանի ելակետն անհատն է՝ իր մարդաբանական առանձնահատկություններով: Միանգամայն իրավացի էր ուսումնասիրողը, երբ նկատում էր, որ Մ. Նալբանդյանի, Ն. Ռուսինյանի, Ռ. Պերպերյանի, Ստ. Ոսկանյանի և ժամանակի հայ այլ մտածողների հայացքներում լիարժեք փիլիսոփայությունը դրսևորվում է նաև մարդաբանական առումով[11]: Այս կտրվածքով ևս պետք է նկատել Մամուրյանի, հիրավի, զուսպ մոտեցումները կոնտյան պոզիտիվիզմին, երբ նա նշում էր, որ իր վսեմ կողմերի հետ ընդհանրական կրոնի գաղափարն ունի «շատ մութ, շփոթ ու խոսուն ստվերներ ևս»[12]: Այսուհանդերձ Մամուրյանն իր ուրույն մոտեցումն է ցուցաբերում մարդկության կյանքում կրոնի նշանակությանը, երբ քննում է Կոնտի դպրոցի մեկ այլ փիլիսոփայի՝ Հերիսոնի հայացքները: Այստեղ անհատի և հասարակության փոխառնչությունների հիմնախնդրում նա վճռական նշանակությունը վերապահում է հասարակությանը՝ նշելով, որ «ընկերային բնության գերակշռություն անձնականին վրա անհատին համար ճշմարիտ կենաց միակ պայմանն է»[13]:

Պետք է նկատել, որ Մամուրյանին, այսուհանդերձ, չի բավարարում «մարդկային ազգի»՝ իբրև վերացական էության պոզիտիվիստական մոտեցումը, և նա նախընտրելի է համարում անհատից դեպի ազգը տանող շարժման կամ տվյալ ազգի իմացական ու բարոյական նկարագրի միջև առկա հակասությունը, հատկապես «այն ազգերու նկատմամբ, որ աշխարհի ամենե բարեկիրթ, ամենե լուսամիտ, ամենե բարոյագետ ազգերը կհռչակվին»[14]:

Ակներևաբար, Մամուրյանին հետաքրքրում են եվրոպական հասարակություններին հատուկ՝ տեխնիկական առաջընթացի և անհատի հոգևոր ու բարոյական աշխարհի աղքատացման, դրանց հակադարձ համեմատականության իրողությունները: Հումանիզմի և այլասիրության տեսակները մասնավորելով այս հակասականության վրա՝ Մամուրյանը տեխնիկական առաջընթացը համարում է նյութական աշխարհը հեղաշրջող երևույթ, որը, սակայն, աղքատացրել է անհատի հոգին ու բարոյականությունը և հասարակությանը հասցրել սոցիալական բևեռացման՝ մի կողմից ինքնամոլ ու անսիրտ վերնախավ, և մյուս կողմից՝ գետնաքարշ ու անբան ներքնախավեր: Նա հավատում էր, որ այս ավերիչ անջրպետը հնարավոր է

---

[9] *«Արևելյան մամուլ», 1896, 15 հունվարի, էջ 39:*

[10] *«Արևելյան մամուլ», 1896, 15 փետրվարի, էջ 132:*

[11] *Տե՛ս Ս. Սարգսյան. Մարդու հիմնախնդիրը XIX դարի հայ փիլիսոփայական և հասարակական մտքում, Երևան, 2001, էջ 89:*

[12] *«Արևելյան մամուլ», 1896, 15 մարտի, էջ 162:*

[13] *Նույն տեղում, էջ 168:*

[14] *Նույն տեղում, էջ 170:*

լցնել միայն հումանիզմի, բարության ու արդարության գաղափարներով ընթանալու միջոցով[15]: Եվ դարձյալ, Մամուրյանն այս ամենը համարում է հեռավոր արժեքներ, որ մարդկությունը ձեռք է բերելու ապագայի հեռուներում՝ հետևում թողնելով անհատական, ազգային և միջազգային տարբերություններն ու հակամարտությունները: «Մարդկային սեռն որքան բաժանում, նույնքան խիղճ ունի… և այդ խիղճը քան վայրենվույն, քան բարբարոսինն ավելի ահարկու, ավելի դժնդակ կերպարան մը կառնու, երբ գիտության, իմաստասիրության և քաղաքակրթության շպարով զարդարված՝ կքաջալերե, ինչ որ տարրական բարոյականության մը հրեշային գործերու կարգը կդասե»[16],– գրում է նա:

Իր հումանիստական դրույթները Մամուրյանը հենում է հոգևոր արժեքների, այլև խղճի, բարոյական օրենքի հայեցակարգի վրա: Վերոհիշյալ հակամարտությունները, կարծում է նա, մեկ օր պայթելով կարող են կործանել «եվրոպական արդի ընկերական շենքը», և այս մոտալուտ հեռանկարն այնքան ժամանակ կսպառնա մարդկությանը, «մինչև որ ներդաշնակություն չհաստատվի այն հանգամանաց մեջ, որ բարոյական մարդու հատուկ են»[17]: Հումանիստական արժեքների մեջ Մամուրյանը ազդեցիկ, թերևս, վճռական գործոն է համարում խիղճը: Խղճի կամ բարոյական պարտքի զգացումը իր մարդկայնացման գործընթացը պետք է իրացնի էվոլյուցիոն՝ բարեշրջական շարժման շարունակական ընթացքի մեջ: Աստիճանական զարգացման օրինաչափությունները Մամուրյանը բխեցնում է մարդկային բնությունից՝ միջավայրից և հասարակության համար սահմանում բնության (կենդանի օրգանիզմի) գրեթե նույն ընթացքը, տվյալ դեպքում առնչվելով սոցիալ-դարվինիզմի տեսական ընդհանրացումներին: Այս դեպքում բարեշրջում հասկացության ներքո Մամուրյանը ենթադրում է նյութական, բարոյական և մտավոր անընդհատ զարգացումը՝ ժողովուրդների պահանջների և ժամանակի ոգու համեմատ: Ընդ որում, դրանցից յուրաքանչյուրի զարգացումը պայմանավորված է մյուսի զարգացմամբ և, ընդհակառակը, մեկի աղարտումը մյուսի աղարտումն ու զարգացման ընթացքի կասեցումն է միանգամայն: Ամբողջացնելով իր մոտեցումը՝ Մամուրյանը նշված հատկանիշները գոտևորող էական կապը տեսնում է բարոյական պարտքի, արդարության ու ճշմարտության հումանիստական արժեքների մեջ: Մամուրյանը բարձր էր գնահատում, հատկապես հասարակության զարգացման տեսակետից, Կանտի տրանսցենդենտալ գաղափարը և ընդգծում, որ այն «միանգամայն արդարության և սիրո գերագույն տեսիլն է, երբ պիտի ծագի, ծավալվի և արմատ ձգե այն մարդկային խումբերու մեջ, որ եսականության պղտոր ջուրերու մեջ կտապալին, երբ նյութն նվազ պիտի պաշտվի, քան հոգին»[18]: Բարոյական պարտքն է, կարծում է նա, որ ազգի միջից պետք է

---

[15] *«Արևելյան մամուլ», 1896, 15 հոկտեմբերի, էջ 611–621:*

[16] *«Արևելյան մամուլ», 1897, 1 հուլիսի, էջ 443: Տե՛ս նաև Մ. Մ ա մ ո ւ ր յ ա ն. Երկեր, Երևան, 1966, էջ 168:*

[17] *«Արևելյան մամուլ», 1897, 15 սեպտեմբեր, էջ 602:*

[18] *«Արևելյան մամուլ», 1895, 15 նոյեմբեր, էջ 710:*

վանի նրա ավանդականորեն հոռի կողմերը՝ անմիաբանությունը, եսակենտրոն հակումները և նախանձը՝ հաստատելով բարոյական արիությունը[19]:

Հասարակության բարեշրջման օրենքը համընդհանուր որակներ ունի Մամուրյանի հայեցակարգում և տարածվում է հասարակության մտավոր, հոգևոր ու բարոյական բոլոր կառույցների վրա: Նկատենք, որ եվրոպական քաղաքակրթության ընթացքը նրան չի ներկայանում իբրև բարեշրջական ուղղություն: Եվրոպական ազգերի զարգացման համեմատ նրանց մեջ խամրում են համերաշխության և մարդասիրության տեսիլները (իդեալները)՝ տեղի տալով իրենց զորությունը պահպանած շահադիտական նպատակներին: Նրանց մեջ նվազում են արդարության ու մարդասիրության որակները[20]: Ավելացնենք, որ վերոհիշյալ՝ Կոնտի ընդհանրական կրոնի գաղափարը Մամուրյանին հետաքրքրում էր այս՝ պետությունների և ազգերի անբարոյությունն ու մեկուսացածությունը ծածկելու ունիվերսալ հավակնությունների տեսակետից:

Հայ հանրության մեջ հասարակական բարեշրջումները Մամուրյանը պատկերացնում էր պահպանողական կրոնամտության և մյուս կողմից՝ արմատականության չափավորման միջոցով: Եթե եկեղեցին չի տոգորվում գիտության լույսով, ուրեմն չի կարող ներգործել ժողովրդի վրա, իսկ իր հերթին, ծայրահեղ իմաստասիրական գաղափարները կարող են հաշմել նրա համար բնականոն՝ հաջորդական առաջադիմության ընթացքը[21]: Այստեղ նկատենք, որ Մ. Մամուրյանը ևս, ինչպես XIX դ. 2-րդ կեսի հայ առաջավոր հասարակական մտքի ներկայացուցիչները, այդ թվում և Մ. Նալբանդյանը, եկեղեցուն ազգային գործառույթներ են վերապահել՝ ընդունելով «ազգային կյանքի կազմակերպման համակարգի մեջ եկեղեցուն հատկացված դերը»[22]: Մամուրյանը հանդես էր գալիս որպես կրոնական ու ազգային հիմնարկությունների մշտական բարեշրջման կողմնակից, որ համընթաց էր գնալու անհատի, ուրեմն ազգի հոգևոր ու մտավոր զորացմանը: Բարեշրջական դրույթները հիմնավորելիս նա հակադրվում էր, ի դեպ, Մալթուսի տեսությանը. հասարակության աստիճանական զարգացման օրինաչափությունների ոտնահարումն է հասցնում ժողովրդագրական աղետների և ոչ թե բնության հնարավորությունների ենթադրյալ սպառումը, նկատում էր նա[23]: Բնությունից կտրվելն է աղարտում մարդուն, նրա իմացական ո ւ բարոյական մեկուսացումն է տանում դեպի հասարակական անշարժացում: Սրա հետ միասին Ռուսսոյին վկայակոչելը, բնության նշանակության արժևորումը հասարակական զարգացման մեջ՝ Մամուրյանի բարեշրջական հայացքների կարևոր կողմերից մեկն է: Այսուհանդերձ,

---

[19] *«Արևելյան մամուլ», 1891, օգոստոս, էջ 365:*

[20] *«Արևելյան մամուլ», 1896, 1 փետրվարի, էջ 65–68: Մ. Մամուրյանը քանիցս անդրադարձել է տեխնիկայի՝ «մեքենական արտադրության», մարդու հոգևոր աշխարհի վրա թողած ավերիչ ազդեցությանը: Գերմանացի հումանիստ փիլիսոփա Ա. Շվայցերը, արդեն մեր ժամանակներում նկատում էր, որ արտադրության մեջ մեքենայի վերածված մարդիկ ենթարկվում են «իրենց կյանքը եսամոլ անբանության վերածելու վտանգին»(տե՛ս* А. Ш в е й ц е р. Благоговение перед жизнью. М.,1992, с. 225*):*

[21] *«Արևելյան մամուլ», 1882, հունվար, էջ 25:*

[22] *Հ. Գ ն ո ր գ յ ա ն. Ազգային պետություն, ազգային մշակույթ, Երևան, 1997, էջ 34:*

[23] *«Արևելյան մամուլ», 1888, նոյեմբեր, էջ 526:*

հարկ է նշել, որ նա մեքենաբար չի կրկնել էվոլյուցիոն տեսության դրույթները և, ըստ հարկին, քննադատական վերաբերմունք է ցուցաբերել դրանց նկատմամբ: 1870-ական թվականներին Մամուրյանն առարկում էր Սպենսերի այն տեսակետին, որ հասարակությունը ևս ենթարկվում է օրգանիզմի զարգացման օրինաչափություններին, որչափով բարեշրջումն իրենից ներկայացնում է ընդհանրական երևույթ: Եթե Սպենսերի մոտ անհատականությունն է միայն տարբաժանում հասարակությունը կենսաբանական օրգանիզմից, ապա Մամուրյանը մեկնում է այդ նույն հասարակության բարոյական ու իմացական սկիզբներից՝ առաջադրելով հասարակության կամքի ու բանականության վճռական նշանակությունը զարգացման գործընթացում[24]: Այնուհետև, հակառակ բարեշրջականների, նա բարոյականությունը ձերբազատում է օգտապաշտության պահանջներից՝ դրան տալով ոչ թե ֆիզիկական, կենսաբանական և սոցիոլոգիական օրենքների ենթակայական անդրադարձի, այլ հասարակության զարգացման հիմնարար նշանակություն:

1890-ական թվականներին Մամուրյանն առավել լայն չափերով է անդրադարձել Սպենսերին՝ նրա բարեշրջական տեսությունը բնութագրելով որպես ունիվերսալ տեսություն, որ «կտիրե դարուս ամեն գիտական հարցերու և խորհուրդներու վրա»[25]: Այս շրջանում Մամուրյանն ավելի մեծ ուշադրություն է դարձնում Կոնտին, Դարվինին և պոզիտիվիզմին՝ ժողովրդականացնելով նրանց դրույթները և հասցեագրում բոլոր նրանց, ովքեր «գիտական բարեշրջության օրինաց հետամուտ լինիլ անկեղծորեն կփափագին»[26]:

Հումանիստական սկզբունքների և հասարակության բարեշրջումների վերաբերյալ Մ. Մամուրյանի պատկերացումները բնութագրվում են մտքի խորությամբ և հայեցակարգային լայն ընդգրկումներով: Հիմնականում մեկնելով հասարակության զարգացման իդեալիստական հայեցակետից՝ նա միջավայրի, անհատական ու հասարակական բարոյականության իր գնահատումներում հենվում է նաև զարգացման մատերիալիստական ըմբռնումների վրա:

Մ. Մամուրյանի հումանիզմը սկիզբ է առնում հայ լուսավորական գաղափարախոսությունից. համընդհանուր սիրո և եղբայրության գաղափարը, սեփական ես-ի հաղթահարման դրույթները, որ ընկած էին ազգային միասնությանը հետամուտ այդ գաղափարախոսության հիմքում, իրենց հետագա զարգացումներն են գտել նրա փիլիսոփայական ու բարոյագիտական հայացքներում: Միաժամանակ, վերոհիշյալ գաղափարների իրականացումը Մամուրյանը համարում է հասարակական բարօրության նախապայման, որ տանելու էր դեպի բոլոր ազգերի համերաշխ գոյակցություն: Այս հանգրվանին հասնելը նա պատկերացնում է ինչպես անհատի, այնպես էլ հասարակության շարունակական բարեշրջման միջոցով: Համամտելով հասարակության աստիճանական զարգացման տեսությանը՝ Մամուրյանը հատկապես կարևորում էր ազգի և մարդկության ար-

[24] *«Արևելյան մամուլ», 1875, հունվար, էջ 12:*
[25] *«Արևելյան մամուլ», 1895, 15 նոյեմբերի, էջ 695:*
[26] *«Արևելյան մամուլ», 1896, 1 մայիսի, էջ 275:*

դեն իսկ ստեղծած համամարդկային արժեքների («հիմնական բարվոքումներ») պահպանությունն ու դրանց վրա բարձրացող նոր որակների ստեղծումը: Դրանց իրականացման գործում նա կարևոր լծակներ էր համարում բարքերի ու բարոյականության ազնվացումն ու գիտության և մշակույթի զարգացումը: Հումանիզմի և հասարակության բարեշրջման սկզբունքները Մամուրյանի հայեցության մեջ ներթափանցված են միմյանցով և հանդես են գալիս որպես նրա փիլիսոփայական առաջավոր հայացքների դրսևորում:

ГУМАНИЗМ И ЭВОЛЮЦИЯ ОБЩЕСТВА В ФИЛОСОФСКИХ ВЗГЛЯДАХ МАТТЕОСА МАМУРЯНА

АЛЬБЕРТ ХАРАТЯН

Р е з ю м е

Гуманистические взгляды М. Мамуряна (1830–1901) исходят из идеологии армянской просветительской мысли. Идея всеобщей любви и братства, положения о преодолении самодостаточного «эго», заложенные в основу этой идеологии, получили дальнейшее развитие в философских и этических взглядах М. Мамуряна. Претворение в жизнь этих идей он считал предпосылкой общественного благополучия, способствующей солидарности и братству всех наций, что возможно осуществить лишь путем реформы общества и усовершенствования личности. Исходя из теории ступенчатого развития общества, Мамурян придавал особое значение сохранению общечеловеческих ценностей и формированию нового мировоззрения.

HUMANISM AND THE SOCIETY'S EVOLUTION IN THE PHILOSOPHICAL VIEWS OF MATTEOS MAMURYAN

ALBERT KHARATYAN

S u m m a r y

M. Mamuryan's (1830–1901) humanism is rooted in the ideology of the Armenian Enlightenment. The idea of universal love and brotherhood, the theses of overcoming self-reproducing ego that were in the basis of the ideology targeted at the national unity had found their development in the philosophical and moral views of M. Mamuryan. He considered the realization of those ideas to be a precondition of social welfare which would be harmonious existence of all nations, realized by means of evolution of the individual and the society. Proceeding from the theory of gradual development of society Mamuryan paid special attention to the preservation of human values created by nation and mankind and formation of new qualities based on them.